

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ԿԱՐԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱՅԱՅԱԾ ՏՈՆԱԿԱՆ
ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Հարգարժա՛ն երիտասարդներ,

Միրելի՛ հյուրեր

Ամենաջերմ բարեմաղթանքներով շնորհավորում եմ Երիտասարդության միջազգային օրվա առթիվ և ցանկանում, որ Ձեզ մշտապես ուղեկցեն հաջողություններն ու ձեռքբերումները:

Համոզված եմ, որ Դուք լիարժեքորեն ընկալում եք ժամանակի պահանջներին համահունչ մտածողության բոլոր մանրամասներն ու այդ ամենին լիարժեքորեն համադրում ազգային ինքնագիտակցության գերկարևոր դրսևորումները:

Տոնական այս օրվա շրջանակներում վստահաբար կարող եմք փաստել, որ երիտասարդության հետ տարվող աշխատանքն ու համանուն պետական քաղաքականությունը դարձել են գերակա ուղղություններ՝ նոր լիցքեր ու դրական զարգացումներ հաղորդելով Ձեր աօրային, մասնագիտական կողմնորոշումներին, ստեղծագործական և մտավոր ներուժի բացահայտմանը:

Թո՛ղ որ, այսուհետ ես իրականություն դառնան Ձեր բոլոր նպատակներն ու նախաձեռնությունները՝ խաղաղության ու բարության ազդակներ հաղորդելով մեր ապագային կերտման կարևորագույն գործընթացին:

Կրկին շնորհավորում եմ երիտասարդության միջազգային օրվա առթիվ, որն իրավամբ նոր լիցք է հաղորդում երիտասարդների աօրային՝ այն դարձնելով առավել ընդգրկուն և հազեցած: Երիտասարդությունը յուրաքանչյուր մարդու կյանքում առավել կարևոր ու առանցքային մի ժամանակահատված է, երբ դրսևորվում է անձն իր ողջ ընդունակություններով ու ձևավորվում որպես անհատականություն:

Դարձյալ ողջունում եմ բոլորիս այս նշանակալի օրվա առիթով և ցանկանում ամենայն բարիք:

12.08.2013թ.